ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/175

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Ատա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Մասնակից՝ «Ատա» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Մովսեսյանի, ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/10» ծածկագրով գնանշման հարցում, գրենական պիտույքների, օժանդակ նյութերի, պահեստամասերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16835-2019 գրությամբ «Ատա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունի 11.10.2019թ.-ի թիվ ՊՆ/02/2102-2019 գրության հիման վրա, 14.10.2019թ.-ին «Ատա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 14.10.2019թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ: 22.10.2019թ.-ին ու 30.10.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.11.2019թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.10.2019թ.-ի թիվ ՊՆ/02/2102-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Ատա» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է ներկայացված հայտի հավելված 1-ում շտկել ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարումն իրականացնելու համար նախատեսված աշխատակիցների քանակը, քանի որ մասնակիցը չէր ներկայացրել աշխատակիցների քանակը:

«Ատա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել անհրաժեշտ շտկումը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N

526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջները, որոշել է մերժել մասնակցի հայտը:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացնում է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ատա» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Ատա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 15.10.2019թ.-ին գրությամբ դիմել է «Ատա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16835-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը 18.10.2019թ.-ին Բողոքներ քննող անձին ուղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«2019թ. հոկտեմբերի 15-ին էլեկտրոնային փոստով ծանուցում եմ ստացել, որ Ձեր վարույթում է քննվում «ԱՏԱ» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը: Վերոհիշյալի կապակցությամբ հայանում ենք հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/10» ծածկագրով ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել «ԱՏԱ» ՍՊԸ-ն:

Սահմանված ժամկետում ընկերությունը պահանջվող փաստաթղթերը ներկայացրել է, սակայն գնահատող հանձնաժողովի որոշմամբ սահմանված կարգով «ԱՏԱ» ՍՊԸ-ին armeps.am համակարգի միջոցով ծանուցել է ներկայացված հայտի հավելված 1-ում շտկել ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարումն իրականացնելու համար նախատեսված աշխատակիցների քանակը, և քանի որ իմ կողմից վերը նշված թերությունը վերացվել է ծանուցումը ստանալու հաջորդ օրը, ուստի ընկերության նկատմամբ նախաձեռնվել է վերը նշված գործընթացը:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Համաձայն Կարգի 42-րդ կետի եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ուսումնասիրելով «ԱՏԱ» ՍՊԸ-ում նշված ժամանակահատվածում ստեղծված իրավիճակը, հայտնում ենք, որ Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված է եղել 2017թ. օգոստոսի 15-16-ը կատարելու գնահատող հանձնաժողովի կողմից պահանջված շտկումը:

Մասնավորապես, «ԱՏԱ» ՍՊԸ-ն, բացի տնօրեն Արմեն Մովսեսյանից, այլ աշխատող չունի:

Ինչ վերաբերում է տնօրեն Ա. Մովսեսյանին, ապա վերջինիս կինը Վարսենիկ Ավետիսյանը, վայր ընկնելու պատճառով կոտրել է ոտքը, տեղափոխվել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ, 2019թ. մայիսի 29-ին ծանր վիրահատություն է տարել և մինչ օրս չի կարողանում ինքնուրույն քայլել, ուստի ստացիոնար բուժում ստանալուց հետո հաճախակի բուժհետազոտման և վիրակապը փոխելու նպատակով ամուսնու և որդու օգնությամբ և ուղեկցությամբ այցելում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ: Ընկերության տնօրեն Ա.Մովսեսյանը հերթական անգամ կնոջը բուժզննման տանելու օրը համընկել է այն օրվան, երբ խախտում տեղ գտած անհամապատասխանությունը վերացնելու ծանուցումը հանձնաժողովը համակարգով ուղարկել է նրան և նա, չլինելով աշխատանքի վայրում և չբացելով էլեկտրոնային փոստը, իր կամքից անկախ պատճառներով չի տեղեկացել ծանուցման մասին, ուստի թերությունները վերացրել և Հանձնաժողովին է ներկայացրել մեկ օր անց:

Այսպիսով, վերոհիշյալ փաստերը վկայում են, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ն օբյեկտիվորեն զրկված էր սահմանված օրվա ընթացքում տեխնիկական բնութագրում համապատասխան

շտկում կատարելու հնարավորությունից, քանզի, ինչպես արդեն նշվեց, ընկերության միակ աշխատակիցը օբյեկտիվ պատճառներով աշխատանքի չի ներկայացել, ուստի և չկար որևէ այլ աշխատող, որը կկարողանար այդ ժամկետում ներկայացներ պահանջված շտկումը:

Նման փաստական հանգամանքների պայմաններում «ԱՏԱ» ՍՊԸ-ն օբյեկտիվորեն գրկված է եղել համապատասխան պարտավորության կատարման հնարավորությունից:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Ատա» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/175 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից գրենական պիտույքների, օժանդակ նյութերի, պահեստամասերի ձեռքբերման նպատակով 13.09.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ատա» ՍՊԸ-ն:

«Ատա» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Նույն հավելվածով՝ Մասնակիցը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/10» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարումն իրականացնելու համար աշխատակիցների քանակ չի նշել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.09.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ատա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1 հավելվածում նշված չէ ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարումն իրականացնելու համար նախատեսված աշխատակիցների քանակը:

Նույն արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2019թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 30.09.2019թ.-ին Հանձնաժողովը կասեցրել է հայտերի փաստաթղթերի ամփոփման նիստը և մասնակցին ծունեցել է անհամապատասխանության շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2019թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Ատա» ՍՊԸ-ի հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16835-2019 գրությամբ «Ատա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների

նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 7.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 7.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատաս-խանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ներկայացնի հրավերով

սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի գնանշման հարցման հայտը պատրաստելու մասին հրահանգի 2.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գրենական պիտույքների, օժանդակ նյութերի, պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ մասնակցության հայտ է ներկայացրել «Ատա» ՍՊԸ-ն:

«Ատա» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին, սակայն նույն ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարումն իրականացնելու համար աշխատակիցների քանակ չի նշել:

Հանձնաժողովի 25.09.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ատա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1 հավելվածում նշված չէ ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարումն իրականացնելու համար նախատեսված աշխատակիցների քանակը: Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ 30.09.2019թ.-ին Հանձնաժողովը կասեցրել է հայտերի փաստաթղթերի ամփոփման նիստը և մասնակցին ծունեցել է անհամապատասխանության շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Ատա» ՍՊԸ-ի հայտը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունի կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Ատա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 1 հավելվածում նշված չէ ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարումն իրականացնելու համար նախատեսված աշխատակիցների քանակը: Ընդ որում, վերջինս էլեկտրոնային եղանակով տեղեկացված լինելով հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին, չի շտկել դրանք:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում...:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից նշված այն հանգամանքին, որ «Ատա» ՍՊԸ-ն օբյեկտիվորեն զրկված էր սահմանված օրվա ընթացքում համապատասխան շտկում կատարելու հնարավորությունից, քանի որ ընկերության միակ աշխատակիցը աշխատանքի չի ներկայացել և չի կարողացել այդ ժամկետում ներկայացնել պահանջված շտկումը, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Մասնակցի կողմից բերված վերոնշյալ պատճառաբանություններն օբյեկտիվորեն չէին կարող զրկել վերջինիս օրենքով սահմանված և իր կողմից ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու հնարավորությունից, քանի որ շտկումը տեխնիկական բնույթի էր, դա կատարելու համար երկար ժամանակ չէր պահանջվելու, ինչպես նաև ծանուցման ստացման օրը և դրան հաջորդող ամբողջ օրը Մասնակիցը հնարավորություն է ունեցել կատարելու համապատասխան շտկումը, որը, սակայն, չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16835-2019 գրությամբ «Ատա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/175 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ատա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**